


ՏԵՐԵՆ-ՆՔՐԱԳԻՐ
Ե. ՔՐԱՐՈՍԵԱՆ
 ԿԵՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ ԳՈՐԽՈՒՆ
 ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԲՐԱԳՐԻ
 ԳԱՅԻՐԷ (Հասպոզանի)
 Rédaction du journal arménien
ARCHALOUÏOS
 HABBANISH LE CAIRE (Égypte)



ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՒ ԻՅՈՒՆԻՍԻԱՐ
 Տարեկան, ողջ դահլիճ. 60
 Վեցամսեայ » 35
 ԵՍՏԻՆՆԵՐ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12
 ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒՄ Է
 ԵՒ ԲՈՒՅՈՒՍԱՐԻ ԾԱԽՔԷ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղաւած
 գրութիւնք եւ չ'են ցուիր:

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ԵՍՏԻՆՆԵՐ ՕՐԵՐԸ

'ԱՐՇԱԼՈՅՍ'Ի ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ

Մեր վեցամսեայն կ'աւարտի այսօր և ստիպուած ենք հրապարակելու թէ՛ հաւանակ բաժնեգրիներու կ'ԱՆԻԻԿ վճարումը յայտարարուած ըլլալուն, դեռ շատ մը բաժնեարգներ իրենց պարտքը վճարած չեն: Իրում է թէ մենք մասնաւոր գիմումներ ընել յարմար գտած չենք, մեր ընթերցողաց պարկեշտութիւնը չ'վիրաւորած ըլլալու համար. բայց Ա. վեցամսեի լրումը և «Արշալոյս»ի մէջ հարկ տեսնուած ինչ ինչ կարեւոր բարեփոխութիւնները, կ'ստիպեն զմեզ խնդրելու թէ՛ տեղական և թէ՛ արտասահմանի մեր արգոյ ընթերցողներէն, որ շարահանին փութացնել այս անգամ իրենց տարեկան բաժնարգադրիներն, մեր ամենագթաւարին ձեռնարկին մէջ գէթ մեր վրայէն բաւանալու համար նիւթական հոգը՝ որ ամենակարեւորն է և ամենէն քիչ նկատուողութեան աւանուածն ընթերցողաց սմանց կողմէ:

Հայկական Միութեան Կ. Պօլսոյ ճիւղին կողմէ հետեւեալ կոչը զրկուած է մեզ ի հրատարակութիւն:

Բանտարկելոց տառապալից վիճակը, որոց մանրամասնութիւններն ընել շատ սրտաշարժ պիտի ըլլայ, խղճի պարտք կը դնէ մեր վրայ զայս հրատարակելէ վերջ կոչում ընել աղին զգացումներու, որ փութան օժանդակել՝ կարեկցելով իրենց բանտարկեալ եղբայրներուն վրայ, որոնք չենք կարող ըսել թէ իրաւացի յանցանքներու պատճառաւ նեղուած են բանտերու խորերը և կը չարչարուին:

Պ. Ս. Խմբագրապետ,
 Պօլսոյ և Գաւառներու բանտերէն ծայրոհեղ թշուառութեան օրտաճմիկ լուրեր կը հասնին: Ազգին լաւագոյն բայց է՛ն գգաւոր զաւակներն են որ կը հեծեն հանգրուանի շարչարանքներով. իրենց բարոյական ու ֆիզիքական տառապանքներուն կը միանայ նիւթական ողբալի վիճակ մը: Հիւանդ և անօթի՝ անոնք դանդաղ ու ահաւոր մահուան մը ճամբան բռնած են և մենք գիտենք որ անոնցմէ ոմանք մեռած են, լրա ու մունջ, բացարձակ մոռացութեան ու չբնան մէջ:

Անթ մըն է սր մինչև հիմա Հայ ժողովուրդը անհատական կամ հաւաքական նախաձեռնութեամբ, դաղտփարը ունեցած չ'ըլլայ օգնութեան հասնելու մեր այդ գգաւոր եղբայրներուն, որոնք ամեն բան զոհած են յողթանակին համար նպատակին՝ որ ամենուս իտէալն է:

Հայ ժողովուրդը իր բանտարկեալներուն տառապանքը կը բազմապատկէ իր անհոգութեամբ, անոնց տալով ազգէն լքուած ու մագուած ըլլալու ցաւը, որ անշուշտ աւելի դաւան է իրենց սրտին քան նիւթական տանջանքները զոր կը կրեն:

Աններկի է որ այս տնտրութեանը տեւ այլ ևս:

«Հայկական միութիւն»ը իրեն նուիրական պարտք կը համարի կոչում ընել բովանդակ հայութեան՝ օգնութեան հասնելու մեր բանտարկեալ ընկերներուն որոնցմէ մէկէ աւելին անբաւական սնունդի հետեւանք թոքախտի ենթակայ ըլլալով, մահուան նախընթաց օրուան մէջ կը գտնուին և դիմում կ'ընէ մասնաւորապէս Ձեր ազգասիրական զգացումներուն, Պարոն Խմբագրապետ, որ հրատարակէք այս կոչը և Ձեր թերթին մէջ հանգանակութիւն մը բանաք ՚ի նպատակ հայ բանտարկեալներուն:

«Հայկական Միութեան» խնդրանքին վրայ Բարիղարնակ վաճառական Պ. Յ. Խմբէնաէր, որ իր հայրենասիրական անկեղծ զգացումներովը հանրածանօթ է, հաճեցաւ իբրև գանձապահ, ընդունել բոլոր նուիրատուութիւնները, որոնք Եւրոպայի և Ամերիկայի հայ գաղթականութեանց կողմէն, ինչպէս նաև ուրիշ տեղերէ, պիտի գրկուին այդ նպատակով:

Monsieur J. ISKENDER
 36, Rue de la Tour d'Avergne, 36
 PARIS (France)

«Հայկական միութիւն»ը պիտի հրապարակու ծանուցանէ, մանրամասն հաշիւներով, հանգանակութեան ձեւացուցած գումարը և անոր ինչ կերպով իր նպատակին յատկացուիլը:

«Հայկական միութեան»
 Կ. Պօլսոյ ճիւղի կողմէն
 Կ. Պոլիս 1 Յունվ. 1900 ԿՆԻԻ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԿԻԱ

Վերջին թղթաբերով Եւրոպայէ հասած թերթերը կը հրատարակեն Մահմուտ վաշայի Մուլթանին ուղղած հետեւեալ նամակը:

Վեհափա Տէր,
 Օսմանեան կայսերական ցեղին ունեցած անձնուիրութեան, ինչպէս նաև կայսրութեան օրինաց հպատակութեան վերայ ոչ ոք կրնայ տարակուսիլ: Սերտ կապեր կը միացունեն ունեցած զիրքը Ձեր գահայիցը Իսլամ մ'եմ եւ Վեհապետին փեսան: Ձեր Վեհափառութիւնը է միանգամայն Իսլամաց Խալիֆան և օսմանցող կայսրը: Վեհապետ և ժողովուրդ միացած են սերտ համբաշխութեամբ մը՝ որ մին միւսին կը կապէ և փոխադարձ պարտականութիւններ կը հրամայէ. ասկից կախում ունի ժողովրդոց ճշմարիտ երջանակութիւնը:

Այսպէս մեր առջին իղձն է որ կարենամք հաւաստել կայսրութեան վերականգնումը ու մեծութիւնը. եւ տեսնել Ձեր Վեհափառութեան առաքինութեան ճամբուն մէջ ամեն օր աւելի յառաջդիմելը. միթէ Մարդարէն ըսած չէ՞ «Վա՛յ անոր որուն յաջորդ օրը նախորդ օրուան պէս է»: արդէն մենք իւրաքանչիւրը միթէ հաւատարապէս շահ չ'ունի՞ Օսմանեան ժողովրդեան փրկութեանը մէջ:

Թայտարեցէք ինձ, Տէր, Ձեզ հաճարձակօրէն ըսելու թէ՛ Ձեր վարչական դրութիւնը բնաւ չի նմանիր Խալիֆայի մը ուղղամիտ և արդարակորով կառավարութեանը, եւ ոչ ալ Եւրոպական կառավարութեանց վեհապետներուն: Աւելի նմանողութիւններ ունի մի քանի հազար տարիներ ստաջ տարող կարգ մը բանապետներու վարչութեանը:

Ձեր Վեհափառութեան իբրև պաշտօնայ գործածած անձեքը մեծ մասամբ ստորին զասակարգի ոգէտներ են, վատուժ ծերեր, կամ դաւաւեր ստալստներ և կաշառուողներ, որոնց բոլորն ալ նշանաւոր են իրենց շողքորթութեամբը, աւարտութեամբը, հարստահարութեամբը և վարձկանութեամբը: Ահա ատոր համար է որ պարկեշտ և առաքինի մարդիկ չեն կրնար մերձենալ Ձեր Վեհափառութեան:

Ո՞ր քաղաքակրթեալ երկրին մէջ գոյութիւն ունի կառավարութիւն մը նման անոր զոր դուք կազմած եւ ընտրած էք: Այդ անպակ տարրերով կարելի է միթէ ապահովել ժողովրդեան մը բարգաւաճումը, եւ այս ամուլ ճամբուն մէջ ձեր յամառութիւնը կրնայ ուրիշ արդիւնք ունենալ, եթէ ոչ մեր ժողովրդեան վերջնական կործանումը:

Դալով Ձեր Վեհափառութեանը, կարգ մը եսասէր և բանակալ վեհապետներու նման, իրեն սկզբունք առած է Լուի Ժերդի սա ձախորդ իտքը «ինձմէ վերջը թող ջրհեղեղ լինի»: Միայն Ձեր անձին վրայ կը մտածէք, ամէն իրաւունք և ամէն մարդկային զգացումնեց առ ոտս կը կոխէք: Ժողովրդեան քարոթութիւնը Ձեր վերջին հոգն է

և 2 1/2 միլիոն մարդիկ Ձեր եսականութեան զոհերը են: Եւ սակայն, վայրկեան մը եթէ մտածէք պիտի տեսնէք թէ՛ միակ ճշմարիտ դատաւորը, տէրը, ժողովրդեան իրիզն է: Ժողովուրդը զՁեզ վերակա- ցու գրած է արգարութեան անտեսումին, ստի- պուած էք յարգել զանի եւ ատով իսկ պատաս- խանատու էք, եթէ չ'էք համակերպիք Ձեր ջան- քերովը եւ Ձեր գործերովը Շէրիին եւ օրինացը:

Հասարակաց կրթութեան, գանձային, ծովա- յին ողորմելի վիճակը, մէկ բառով այն հիւժուժը, թշուառութիւնը՝ որոյ մէջ կը ապստեղին նախա- րարութիւնները, սրտադողի աղաղակը, որ բռնա- պետութեան արհաւիրքէն արիւնոտած բոլոր սը- տերէն գուրս կը ժայթքէ, ակներեւ ապացոյցներ են, որք վճռաբար կը ցուցնեն թէ բռնակալութեան ինչ աստիճանի բարձրացած են ձեր գործերը եւ ձեր մտածումը:

Իսկ զիստուր հեղինակն էք մեր երկրին կործանմանը եւ պատճառը այնքան ստորութեանց եւ կուտակուած նախճիրներու: Ձեր թափել տուած արիւնը, ձեր աւերած տուները, սուսը զոր ա- րածեցիք ամենուն աչքին ակներեւ կերեւին: Հա- զարաւոր մարդկային էակներ, միւսիւրման թէ քրիստոնէայ, ոչնչացան:

Ձեր հպատակները կը փախչին՝ բռնակալու- թենէն խոյս տալու համար: հայրենիքը կը դա- տարկանայ, որով եկամուտն ալ կը նուազի, եւ դուք, հակառակ այս բոլորին, իբրեւ կոչ մը, կը յարաւուրէք ձեր հպարտ եւ լիրձ ճոխութեանը մէջ:

Այն տեսակ գործեր կ'ընէք որք գոյութեան պատճառ չ'ունին, եւ յիմար ծախսեր, զոր օրինակ եւ ոչ մէկ կառավարութեան մէջ չի տեսնուած նշաններ եւ աստիճաններ. գող նախարարներու եւ տկար վէզիրի մը 500 է 2000 ոսկի ամսական, առանց ի նկատի առնելու երկրին եկամուտները որք տասը միլիոն ոսկին չ'են անցնիր. եւ ոչ մէկ բան չի կատարուած զձեզ:

Ձ'էք ստորանար միթէ երբ հիւպատոսնե- րուն կը հրամայէք որպէս զի զին ձերբակալին, պատրուակելով թէ ձեր կենացը դէմ դաւած եմ, թէ կենջա՛ սուլթանուհու յազմանդները գողցած եմ, եւ զանոնք խաբելով իմ երկու զաւակներս տարած եմ, զորս դուք անհափաճա կը նկատէք:

Օսմանեան վեհապետի մը համար գծուծ բան մը չէ՞ միթէ այս տեսակ սուտեր հնարելը, որպէս զի զին ձերբակալել տայ: Բայց կ'անցնիմ անոնք որովհետեւ կայսրութեան այս ճգնաժամի պահուն պէտք է զանց առնեմ ինչ որ իմ անձին կը վերա- բերի, հայրենիքին վրայ միայն խօսելու համար:

Մեր երկիրը հարուստ է, բարգաւաճման ըն- դունակ, եւ կարող լայնօրէն մտնեցանելու արդի ժողովրդեան քսանպատիկը:

Բայց, աւա՛ղ, խու՛մը մը գողեր անոր վերայ իրկած եւ այնքան գանձերու ճամբան փակած են: Եւ ձեր արարքովը է որ այնքան սիրուած այդ բոլոր երկիրները կործանման վերայ են՝ որ մար- դուս սիրող կ'արիւնտոտէ: Ձեր անուամբ զանազան զրամատանց մէջ գրած միլիոններով, ձեր անձնա- կան շահուն գործածելու միակ նպատակաւ բաշ- խած ձեր նուէրներով, եւ այն անթիւ դուժար- ներով զորս վատնած էք, Օսմանեան կառավա- րութիւնը այսօր ունեցած պիտի լինէր հսկայ նա- ւատորմով մը, որոյ շնորհիւ կրէտէն չէինք կոր- մնցուներ, եւ ոչ ալ, գուցէ, պատերազմը չ'էր ծագեր. պատերազմ մը՝ որ Յունաց մէջ վրէժխնդ- րութեան զգացումը ծնել տուաւ: Այս բոլորը ձեր սխալներովը են, որք երբէք չի պիտի ներուին:

Ութ տարիներէ ի վեր քանիցս ներկայացուցի ձեզ այս մտածումներս: Ձի գիտցաք գնահատել ո՛չ բարի նպատակը, եւ ո՛չ ալ հասկնալ իմ անձ- նութեան ինչու: Յայնժամ վտանգ լինելով թէ՛ չի պիտի կրնամ լսելի ընել ձեզ արգարութիւնը որ- քան ժամանակ որ Պօլիս մնամ, ըսի իւրովի՝ քանի որ Սուլթանը անկարող է եւ չ'ուզեր մտիկ ընել եւ ըմբռնել, պէտք է որ ազգը լուսաւորեմ եւ անոր ներկայացնեմ արդի վարչական ձեւին վը- տանգները եւ զայն փոխելուն պէտքը: Որպէս զի կատարեմ այն պարտականութիւնը եւ իրիզն ա- զատեմ ամեն պատասխանատուութենէ, ատոր համար Եւրոպա եկայ:

Միւսիւրման մ'եմ եւ թիւրքէ կ'ուզեմ ծառա- յել հայրենեացս առանց զեղի եւ կրօնի խորու- թեան. իմ երկու զաւակներս նոյնը կը մտածեն,

և այս նուիրական պարտականութեան կատար- մանը մէջ ինձ օգնելու համար միայն հոս եկած են: Արգարութիւնը միշտ կը յազմէ եւ միշտ ան- նկուն կը մնայ:

SUMMARY OF THE NEWS

4. Պօլսէն հետեւեալը կը հեռագրեն 20 Յուն- ուար թուականաւ:

Վիեննայի նախկին Օսմանեան գեապան Սաատուլլահ փաշայի որդւոյն՝ Նուսրէթ պէյի, որ անձնական գործոց պատճառաւ ամէն տարի Եգիպտոս երթալու սովորու- թիւնը ունի, այս տարի կը զլացուի իրեն պէտք եղած արտօնութիւնը: Յայտնեց թէ առ աշինչ պիտի գրէ, եւ, ստուգիւ ալ, հս- կառակ պալատէն եղած արգելքին, թողուց Պօլիսը Աղէքսանդրիա մեկնելու համար:

ԱՆԳՂԻԱ

Վիպտան Րիչարտ Պլաքմըր վերջերս մեռաւ ի թէտտիկըն 75 տարեկան:

ՅՐԱՆՍՍ

Պատերազմական քարժոց նախարարու- թիւնը նորագրւած հրացանի մը փորձերը կը կատարէ. կ'ըսուի թէ այս հրացանը իւր նախորդներուն — Մարթինի-Հանրի, Կրաց եւ ուրիշներուն — վերայ շատ մը առուե- լովութիւններ ունի: Գիւտը վերջին աստիճան գազանի կը պահեն:

— Բասիլի շրջանակին վաճառականնե- րէն մին՝ իւր տանը գործոցը համար Աննա լընուառ անուամբ և Պրիթանիցի սպասուհի մը կը վարձէ:

Երբ սպասուհուոյն կը հարցուի թէ ին- չո՞ւ մաղերը կարճ են, ի պատասխանի կ'ը- սէ թէ՛ զանոնք վարսավիրայի մը ծախած է և ատոր փոխարէն ստացած գումարովը կարողացած է հայթայթել Բարիզ գալու համար ճամբուն ծախքը:

Տէր և տիրուհի խիստ գոհ էին սպա- սուհուոյն աշխատութենէն. բայց տիրուհին նշմարեց թէ սպասուհին իրեն նկատմամբ արտակարգ հոգածութիւն մը ցոյց կուտայ և ստէպ ձեռքը կը համբուրէ: Ամուսինը կասկածելով խիստ հարցաքննութեան մը ենթարկեց սպասուհին, այս վերջինը յայն- ժամ խոստովանեցաւ թէ՛ ինք կին չ'է, այլ . . . էրիկ մարգ, և ճիշդ անունն ալ ժիւլ Լըպլլան:

Լըպլլան տան գեղանի տիրուհ- ուոյն պարզպէս սիրահարած է եղբւր: Երբ ամուսինը պահականոց կ'երթայ ստի- կանութեան իմաց տըտու, Լըպլլան իսկոյն սպիտակ գլուխը, գոգնացը և սպասուհիի հագուստը հանելով, առնական ձևով խոյս կուտայ առնէն:

ԻՏԱԼԻԱ

Հետզհետէ կը հաստատուի սա լուրը թէ՛ Իտալիոյ առաջարկութեան վրայ, կա- ռավարութեանց միջև գաղափարաց փոխա- նակութիւն մը պիտի լինի առողջապահա- կան միջազգային ժողովի մը գումարման մասին, ի մասնաւորի նպատակ ունենալով աւելի որոշ կերպիւ գծելու ժամտախտի և ուրիշ տարափոխիկ հիւանդութեանց հետե- ւանօք քառանթիւններու հաստատման պայ- մանները:

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

Լոնտոն, 24 յունվար

« Թայմ » կը մեկնաբանէ Սթրուճենի բանակետոյն հրամանատար Պուլլըրի քաշած հեռագիրը: Կ'ըսէ թէ՛ անկարելի է որ շուտով յառաջանանք մեզ բոլորովին ան- ծանօթ երկրի մը մէջ: Թշնամին, ընդհա- կառակը, խիստ լաւ կը ճանչնայ և արագ կը յառաջանայ:

Հոովմ, 24 յունվար

Կրէտէի կառավարիչ ժօրժ Իլիանը յառաջիկայ գարնան հոս կ'սպասուի:

Բ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Տ. Թ. ՖԱՍՈՒԿԵԱՃԵԱՆԻ

Առաջիկայ կիրակի 4 Փետրուար Արե- վելեան նորակազմ թատերական խումբը՝ առաջնորդութեամբ հանրածանօթ ողբեր- գու Տիար Թ. Ֆասուլեանեանի, նորաչէն Եգիպտական թատրոնին մէջ պիտի ներ- կայացնէ 80ն ՍէՉԱՐ ՏԸ ՊԱՉԱՆ հինգ ա- րարուածով թատերախաղն:

Սոյն ներկայացման արտասովոր փայլ մը տալու համար, Արեւելեան թատերական խումբը, այս անգամ միացած է ամերիկեան հռչակաւոր խմբին, որուն Պ. Չէնթոյ կ'ա- ռաջնորդէ:

Պ. Չէնթոյ և իր խումբը միջնարար- ներու առեն՝ վարժ թուլթակներու միջո- ցաւ խիստ զուարճալի և հետաքրքրական գործողութիւններ, ինչպէս նաև հեծելա- նիւններով և միանիւններով արհեստալից պը- տոյաներ պիտի կատարեն:

Տիար Թ. Ֆասուլեանեան և իր նորա- կազմ խումբը իրաւունք ունին յուսալու թէ՛ պէտք եղած քաջալերութիւնը պիտի գտնեն իրենց ձեռնարկին մէջ, քանի որ իրենց ներկայացումները հետաքրքրական և գոհացուցիչ ընելու համար իրենց ջանքը չեն խնայեր, ինչպէս փորձը պիտի հաս- տատէ:

ԳՈՐԾԱՆՈՐԱԿԱՆ ԽԵՂԻՐԸ

Ուրախութեամբ կը լսենք թէ՛ Սիկա- րաճի գործաւորները համաձայնելու վրայ են ծխախոտի գործարանատէրերուն հետ և մտաւրաւ իրենց աշխատութեան պիտի սկսին:

Գործաւորներն որ մէկ ու կէս ամիս աւելի է պարսպ կը պտըտէին, ուր ուրեմն կ'ար- ժանանան գործարանատէրերուն զիջումն ստանալ և պէտք է խոստովանել թէ՛ ասի- կայ շատ կարեւոր տեղ մը պիտի գրուէ գործաւորական պատմութեան մէջ: Ժողո- վրդական յաղթանակ մ'է այս, որ առածի մը ուժը կը ջնջէ սմեծ ձուկը պղտիկ ձուկը այլ ևս չ'պիտի կուտայո, քանի որ դարերը կը փոխուին, կարժէ որ անոնց հետ փոխուին նաեւ հին բանաձեւներն, եւ միեւնոյն ա- տեն հին համոզումներն:

Փարիզէն մեզ ուղղուած թղթակցուած թերթէ մը կը տեղեկանանք և ուրախութեամբ կը ծանուցանենք թէ՛ ամսոյս 14ին, տեղւոյն հայ երիտասարդութիւնը առաջնորդութեամբ Պ. Ս. Պէնլեանի, Պուլվար տէզլիթալիէն ԲՈՄԲԱՏՈՒՐ թատրոնի մէջ ներկայացուցած է անմահն Պէշիկթաշեանի ողբերգութիւնը, ԱՐՇԱԿ Բ.:

Տիար Ս. Պէնլեանի Սրշակ Բ. ին մէջցոյց տուած մեծ յաջողակութեանը ականատեսներէն ըլլալով, չենք տարակուսիր երբէք թէ՛ Բարիզի հայութիւնը և նոյն իսկ ներկայ եղող օտարազգիներ, իսկապէս շքեղ երեկոյթ մը վայելած ըլլալու գոհունակութիւնը ունեցած են:

Աղեքսանդրոյ ժողովրդական Գրադարան-Ընթերցարանի վարչութիւնը զրկած է մեզ իւր քառամսեայ երեւոյց հաշուեցոյցը, որ շատ ընդարձակ և մանրամասն տեղեկութիւններ կը պարունակէ:

Հետեւեալ փոքրիկ մասը միայն հրատարակելով, առաջիկային կը թողունք մեզ զրկուած խոշոր թղթածրարին մանրամասնութեանցը մէջ մտնել և կարծենք անօգուտ չ'պիտի ըլլայ անով զբաղելը:

ՔԱՌԱՄՍԵԱՅ ԵԼԵԻՄՈՒՏԵՐԸ

ՃՈՂ. ԳՐԱԳՐԱՐԱՆ-ԸՆԹԵՐԳՅԱՐԱՆԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ

ՄՈՒՏՔԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Նուիրատուութիւնք', 'Գանձանակ', 'Բաժանորդներէ', etc.

ԵԼՔԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Գոյքի գնում', 'Չանազան ծախք պիւֆէի', 'Մառայողք', etc.

Մնտուկը պատրաստ դրամ 3267 20

Գումար 208 —

Գումար 3475 20

Ի դիմաց ժող. Գրադարան-Ընթերցարանի վարչութեան

Ատենապարտ Ատենապետ

Ա. ՆԱԳՇՃԵԱՆ Թ. Ա. ԳԱԼՖԱՅԵԱՆ

ՀԱՐԵԻԱՆՑԻ ԱԿՆԱՐԿ ՄԸ ԳԱՀԻՐԷԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱ-ԲՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Այսօր Գահիրէ շատ տարբեր է, քան ինչ որ էր Անգղիացւոց հոս ոտք կոխելէն առաջ. թէպէտ այս փոփոխութիւնը ամբողջ եզրկատուի վրայ կը նշմարուի, սակայն Գահիրէ մայրաքաղաքը ըլլալով, աւելի կը շեշտուի այստեղ:

17 տարի առաջ, երբ Անգղիացիք ծովային հանգիստը թողով, կը չափէին եզրկատու իրենց քայլերով, մեր երկու զարգացեալ ոստաններուն մէջ պէտք եղած թուով կանոնաւորուած վաճառատուներ չ'կային: Բայց Անգղիացիք երբ մտան եզրկատու, առեւտուրի ասպարէզին վրայ գտնուողներէ շատերը տուգանքներ պահանջեցին կառավարութեանէն, իրենց վաճառողներ խառնակութեանց միջոցին խուժանի թալաններէն: Անգլիացիները կուտար, գիտնալով ատոնց չափազանցութիւնը, բայց այս իր քաղաքակառուցութեան երեք տեսակէտով մեծապէս նպաստուող էր. մին Եւրոպայի առջեւ կը պարզուէր Արաբացւոց բարբարոսութիւնը չափազանցուած գոյներու տակ, երկրորդ Արաբական գանձը կ'սպառէր և նիւթական ոյժը կը տկարանար ու իրեն պէտքը աւելի կ'զօացուէր: Իսկ երրորդ ճիւղը՝ ոչնչուող պիտանի է, ասով վաճառականութեան սիրտը շահած կ'ըլար և ինք արդարադատ կառավարութիւն մը կը ճանչցուէր հասարակութեան Սգնիւ կառավարութիւն, որքան առատաձեւն է, երբ ինչորք ուրիշ կառավարութեան մը ձեռքով բարեբարելուն վրայ է, կարծես այս կառավարութեան համար հեղինակուած է այն առածը՝ որ կ'ըսէ «օտարին ստացուածքով բարեկամ շահիլ»:

Այսօր բաւական զարգացած է Գահիրէ, բայց ոչ անոր համար որ դրամատէրներ յառաջ մղած են վաճառականութիւնը. ընդհակառակը, այսօրուայ վաճառականները՝ երեկուայ խառնակութեաններն են. ամբողջ Գահիրէի մէջ հազիւ բացատուութիւն կայ:

Երկրամասնութիւնը՝ ամենէ աւելի զարգացած առեւտուրն է հոս, ոչ միայն կոկուած փողոցները կը գտնուին անոնք, այլ Գահիրէի ամեն խորշերն ու անկիւնները ու այս ամենուն մէջ երկու հայ գործարանատէրներ կը փայլին և ուրոնք իրենց ճիւղերը Գահիրէի շատ կողմերը նոյն իսկ գիւղերը տարածած են. ինչպէս ըսինք դեռ ուրիշներ ալ կան, բայց յայտնի անուն մը չունին. ժողովրդին փնտռածն է՝ Մաթոսեանի կամ Սանուսեանի ծխախոտը, իսկ ուրիշներունը անձաշակ մարդիկ կ'անեն. արդէն խառնակութեաններու և գիւղացւոց մ'անմասնութիւնը, վերոյիշեալ երկու Հայերու ապրանքին կ'սպառեն: Յոյներն ալ գլանիկի վաճառականութեան հետեւած են, բայց մեծաւ մասամբ Եւրոպա կը զրկեն:

Եզրկատուի մէջ սպառող Այս ամեն ծխախոտը թուրքիան կը մատակարարէ: Թէեւ Եզրկատուի պարարտ հողը, այդ բերքը արտադրելէ բոլորովին զուրկ չէ, ինչպէս Սայիտ, բայց այդ ալ հազիւ կը բաւէ նոյն գաւառին կամ շրջակայի բնակչաց:

Այստեղ մաս մը Հայեր կը հետեւին տեսակ մը պինդ, շուշմագոյն բան մը ծախելու վաճառականութեան, որը մեկնի հիւթէն կը պատրաստուի. տեղացիք զայն հաշիւ (րոյս) կ'անուանեն և այդ Յունաստանէն կամ Գամաակոսէն կուգայ: Ափիոնի այս ազգականը տարբեր ներգործութիւն մը ունի. ափիոնի նման միայն քնացնելու համար չէ այս. այլ զուարթութիւն մը կը ներշնչէ, վշտահալած մ'է, զայն գործածողներու բացատրութեամբ. անգլայ կը դարձնէ մարդս և մարմնապէս բոլորովին կը տկարացնէ, և մարմնոյն գոյնն ալ կը կապտացնէ: Այս թոյնը տեղացի Արաբներէ զատ գործածողներ չ'կան գրեթէ. բարեբաղաբար աննշան բացատրութիւն մը միայն կայ:

Տեղացի Արաբները դեռ նոր սկսած են վաճառականութեան ճիւղին հետեւելու: Այսօր շատերը մեծ եռանդով արհեստ սորվելու ետեւէ են. ձրի կ'աշխատին, ամեն գործարութեանց դէմ կը մաքառին, միայն արհեստը ձեռք ձգելու դիտումով. իսկ քիչ մը սորվելէ վեր՝ շատ դժուար է իրենց վարպետներուն քով տեսնել զիրենք, թէպէտ միշտ թերի է սորվածին:

Խալիֆները վաճառականութեան հետ ու եւ է աննշուրթիւն չունին. թերեւս իրենց մեծագոյն մասին չափազանց ստախոսութեան ու կեղծաւորութեան համար չեն արժանացած այդ փառքին. բայց ունին հարուստ հողատէրներ, ինչպէս իրենց Եկեղեցիներն ալ է: Այս ազգին կանանց, մանկատականներու նման սքողումը, չը յուսացուի թէ ազգային աւանդութիւն մը եղած ըլլայ, այլ հաւանական է թէ արաբներէն օրինակած են:

Գալով Յոյներուն, ասոնք հացագործութեան, գինեվաճառութեան ու նպարավաճառութեան մէջ վայելած գերակշռութիւններն այստեղ ալ չ'ունենաւ ստացուցած: Գահիրէի ո'ր ծայրը որ երթաս Յոյն նպարավաճառ մը, (որը նաեւ գինեվաճառ է) և քանի մը քայլ անդին ալ հայիւլավաճառ մը պիտի գտնաս:

Հրեաները՝ վաշխատութեան և լուծայափոխութեանէ զատ, ակնավաճառութիւն ալ կ'ընեն. իսկ ոսկերչութեան մէջ տեղի տուած են Հայոց, չկարենալով մրցիլ մասնաւոր գաղթականաց հասանքէն ի վեր: Հրեաներն մաս մ'ալ չընեն կերպասավաճառութիւն կ'ընէ: Ամբողջ Գահիրէի մէջ բացատուութիւն կը կազմին ասոնք. իրենց բնակարանները՝ Հրէից փողոց (Հարէթ էլ Եահուտ) անունով զատ թաղի մը մէջ ըլլալով. բայց զարմանալին այն է՝ որ բնիկները մայրենի լեզուն բոլորովին անձանօթ են, իրենց գործածած լեզուն Արաբերէն է:

Գամասկոսցիք՝ որ ամեն օտար երկիրներէ աւելի հոս կը գտուին, մեծ դիրք մը գրաւած են ու Գամասկոսեան խառնակութիւններէն ի վեր կը շարունակեն այս գաղթականութիւնը: Շատեր լաւ դիրքեր գրաւած են, ոչ միայն առեւտուրով, այլև լեզունին Արաբերէն ըլլալով մանաւանդ իրենց օժանդակութիւնը վայելելով կառավարութեան գործերու մէջ ալ մտնելու յաջողած են. ասոնք երբ մեր ազգեցիկ մեծերու հետ բաղաւտենք, երկնքի և երկրի հեռաւորութիւնը պիտի ունենանք աչքի առաջ: Իսկ սիրոյ և միտքեան մասին ունին պանդխտի այն սէրը, որք իրեն միեւնոյն վշտակիցներ իրարմով կը միտքարուին ու միտք հայրենիքի պատիւը յոյսերով զիրար կը քաջալերին: Անկեալ հայրենակցի մը վրայ, ոչ

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աչխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է: Ա. ԼԷՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Այսարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործաւնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը դանձէ: ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Աղեքսանդրիա:

Թէ միայն ցաւակցելով կը գոհանան, այլ գործնական միջոցներով կ'օգնեն:

Դամասկոսցիներու շատերը, հայու տիպարը ունին իրենց դիմագծութիւնով, արդեօք հին գաղթականութեանց ատեն, այդ կողմերը ապաստանող հայոց եւ Դամասկոսցիներու մէջ ալ խնամութիւնն ր տեղի ունեցած են: Արդէն մէկ երկու օրինակներ ալ աչքի առջև ունինք, որոնք Հայաստանցի ըլլալով, իրենց վաւակները մայրենի լեզուին եւ սպորտական բոլորովին անտեղեակ ըլլալէ վերջ, յարաբերութիւններ շարունակաբար այդ օտար ազգին հետ էր ու հայոց հետ խաղախաղած: Հայրերին ճիգրանակերտցի եւ տաճկախօս էր, իսկ մայրերին՝ դեռ բաւական լաւ կը խօսէր հայերէնը, երկար ատեն չը գործածելէ վերջ իսկ:

Մենք ալ կը պարծենանք թէ հոյակապ վաճառ մ'ունինք Հրէաստանի մէջ, անթիւ միաբաններով, նաեւ ճեմարան մ'ալ: Ինչ օգուտ կ'ընեն ատենք երբ իրենց աչքին դիմաց վաճառն պատերազմն թող իսկ նսկելու անընդունակ են. որովհետեւ այդ ակնառես եղած անձինքս ոչ թէ գիտակցաբար, ինքզինքնին այդ ազգին եւ պապականութեան գիրկը նետած էին, այլ հոգեւոր եւ այլ խրատներէ զուրկ ըլլալով, անգիտօրէն այդ հեղեղին մէջ կ'ընթանային համաքայլ:

ՏԻԳՐԱՆ

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԳՈՐԵՍԿԱՆ

Ի նպաստ հինգ զաւակաց տէր աղքատ ընտանիքի մը կազմակերպուած վիճակահանութիւնը կատարուեցաւ այսօր (կիրակէ) Հայոց Բարեգ. սրճարանին մէջ և հետեւեալ թիւերը շահեցան.

Table with 2 columns: Name, Amount. A. Թիւ 128, B. " 62, G. " 249, D. " 90

Շահող անձերէ կը խնդրուի, որ իրենց տոմսակները ներկայացնեն Շարա Ապտին Տայրէի Սէնիյէի դիմաց «Պաղար Թիւրք» վաճառատունը, ստանալու համար վիճակուած նիւթերը թուականէս մինչև 13 օրուան միջոցի մէջ:

Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

28 Յունի. 1900

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ


Տոկուն և մարգարտաչար ակօսներ ու առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդուս գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարենալ ապրելու առաջին պայմանն է: Տիար Պետրոս Նիկողեմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիզու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած և արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած և եզպէքիյէ մրանսէզ վաճառատան ճիշտ դիմացի արարողանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն գիմողներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան և թէ գներու յոյժ չափաւորութեան տեսակէտով:

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի գարմանում:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԴ

ՇԱՐԷԱԳՏԻԿԱՆ ԱՂԻՁ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկնած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քրտնամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս փր մասնաւոր գործակալաց ձեռամբ դնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, Ճապոնի, Սեօլուի և Հնդկաստանի գիւտարարներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պոլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր փոխառնքինքն որ է՝

Քաղաքացիութիւն թէյերու օտակի: Կօթի և զեց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեղի եղած ԿԱՆԻԿ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

-12 50

ԿԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 28 Յունիւլ 1900

Table with 2 columns: Name, Amount. A. Թիւ 1707 շահած է Ֆրանք 1000, B. " 5580 " 200, G. " 4329 " 100, D. " 8853 " 50, E. " 1842 " 50

Table with 5 columns: Name, Amount 1, Amount 2, Amount 3, Amount 4. Հետեւեալը 23 ակն ֆրանք կը շահին: 3046 7713 324 1504 3719 9495, 324 4628 7645 8249 3259 3003, 7499 6249 6176 9941 7356 3033, 242 8019 4568 9678

ԾԱՆՅՈՒԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐՊԵՆԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՒՍԻԿԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՄՍՅՈՅՅԵՆԻՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

Պ. Յ. Ա. Բ. Ե. — Մուրֆի փողոց. — Գ. Ա. Ա. Բ. Ե.

Ս. և Ա. Սեմավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քօնսօյի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՏԷ՛Ր ՀՈՆ և պիտի գտնէք մամէն ճաշակի յարմար զանազան տեսակ յարմար և կոնանց ժամացոյցներ, աղամանազարդ, ձկնի, տօմար և ցիֆէ:

Ճրանտական և ամերիկեան ապրանքատեսակներ տեսակներէն զարգեղէններ, օղբաներ, օղեր, մասանցիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ

50-50

ԿԱՐԵՒՈՐ ԱՂԻՁ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի' ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և զարպետ հացագործի մը միջոցաւ ստորաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակալ կ'ընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօցի Պափ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմարի հիօս դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխաղախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաններ և այլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

23-30